

† † † HOKEHANKISD † † †

**EMMI HAGOP ARABIAN
ASSADOUR , HNAZANT & MANUG ARABIAN
ADAM, VARTANOUSH AND MARY ARABIAN
ASSADOUR, SATENIG AND HRIPSIME OSKANIAN
ARABIAN AND OSKANIAN DECEASED FAMILY MEMBERS**

Requested by: Der Hayr and Board of Trustees
Hinazant Arabian and Children



CHURCH ATTENDANCE PROCEDURE:

- You **MUST** call and **RESERVE** your seat by the Saturday **BEFORE** Sunday's service.
- You **MUST** wear a **MASK** when you are on church property at **ALL** times.
- Upon entrance into the church foyer you **MUST** sign in and follow COVID-19 protocols.



††††† URGENT APPEAL †††††


In view of the tragedy that took place on August 4, 2020 in Beirut, Lebanon, and in accordance with the patriarchal proclamation by His Holiness Catholicos Aram I, the Armenian Prelacy of the Eastern United States has organized a fundraiser to mitigate the unquantifiable material and emotional damage suffered by our compatriots. We ask our Armenian community to participate generously in this campaign of humanitarian aid.

Please send your donation to the Armenian Prelacy, writing LRF (Lebanon Relief Fund) in the memo section. Or by visiting www.ArmenianPrelacy.org/HelpLebanon to donate online.



**Ս. ԽԱՉ ՀԱՅՅ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ
SOORP KHATCH ARMENIAN
APOSTOLIC CHURCH**

☞ SUNDAY, OCTOBER 25, 2020 ☛



ՉԱՅՆ ԳՉ

ԽԱՉՎԵՐԱՅԷՆ ԵՏՔ Զ. ԿԻՐԱԿԻ

Գ Ի Ի Տ Խ Ա Չ Ի

**SIXTH SUNDAY AFTER THE EXALTATION
DISCOVERY OF THE HOLY CROSS**

This Sunday's service will be open to the public, with limited seating, according to COVID-19 guidelines.

Ս. Պատարագ Առ. Ժամը 10:30-ին հեռարձակում

Divine Liturgy 10:30 A.M. Live Streamed

Soorp Khatch Armenian Apostolic Church

4906 Flint Drive, Bethesda, MD 20816

Office Hours: 10:00 a.m. - 2:00 p.m.

Phone: (301) 229-8742; Fax: (301) 229-9393

E-mail: soorpkhatch@verizon.net

Web Page: www.soorpkhatch.org

Rev. Fr. Sarkis Aktavoukian, Pastor

Home Phone: (301) 977-1863; Cell: (301) 787-5506

DER VOGHORMIA

All Sick



Parishioners

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ԿՈՐՆԹԱՅԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԷՆ**

----- (1 . 18 - 24) -----

Խաչին մասին քարոզութիւնը յիմարութիւն կը թուի կորուստի ճամբուն մէջ գտնուողներուն համար, մինչ մեզի՝ փրկութեան ճամբուն մէջ գտնուողներու համար Աստուծոյ զօրութիւնն է անիկա: Արդարեւ մարգարէութեան մէջ գրուած է.

*“Իմաստուններուն իմաստութիւնը պիտի խափանեն,
Խելացիներուն խելքը պիտի կորսնցնեն”:*

Այն ատեն ո՛ր պիտի մնան իմաստունները կամ ուսեայները եւ կամ այս աշխարհի հարցերը քննողները: Չէ՞ որ Աստուած ցոյց տուաւ թէ այս աշխարհի իմաստութիւնը յիմարութիւն է: Որովհետեւ աշխարհը իր ունեցած իմաստութեամբ չկրցաւ ճանչնալ զԱստուած եւ անոր իմաստութիւնը, ուստի Աստուած ուզեց յիմարութիւն համարուած խաչին քարոզութեամբ փրկել անոնք՝ որ կը հաւատան: Եւ թէպէտ Հրեաներ հրաշք կ'ուզեն, իսկ Յոյներ իմաստութիւն կը փնտռեն, մենք խաչուած Քրիստոսը կը քարոզենք, որ գայ- թակողութիւն է Հրեաներուն համար եւ յիմարութիւն՝ հեթանոս- ներուն համար, թէպէտ նոյն այդ Հրեաներէն եւ Յոյներէն կանչուածներուն եւ դարձի եկածներուն համար՝ անիկա Քրիստոսն է, Աստուծոյ զօրութիւնը եւ Աստուծոյ իմաստութիւնը:

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ - (24 . 27 – 36)**

Մեր Տէրը Յիսուս Քրիստոս կ'ըսէ.

«Որովհետեւ Մարդու Որդին պիտի գայ կայծակի նման, որ երբ փայլատակէ՝ կը լուսաւորէ ամբողջ երկնակամարը, արեւելքէն արեւմուտք: Անգղները կը հաւաքուին հոն՝ ուր դիակ կայ:

- Նեղութեան այդ օրերէն անմիջապէս ետք արեւը պիտի խաւարի եւ լուսինը այլեւս պիտի չփայլի, երկինքէն աստղերը պիտի իյնան եւ երկնային մարմինները պիտի սասանին: Ապա Մարդու Որդին նշանը պիտի երեւի երկինքի մէջ, եւ աշխարհի բոլոր ժողովուրդները պիտի ողբան, երբ տեսնեն Մարդու Որդին որ կուգայ ամպերուն վրայ բազմած՝ զօրութեամբ եւ մեծ փառքով: Երբ մեծաձայն փողը հնչէ, ան իր հրեշտակները պիտի դրկէ, որպէսզի հաւաքեն իր ընտրեալները աշխարհի չորս կողմերէն, երկինքի մէկ ծայրէն մինչեւ միւսը:

Թզենին ձեզի թող օրինակ ըլլայ: Երբ տեսնէք որ անոր ճիւղերը կը կակուղնան եւ տերեւ կ'արձակեն, գիտէք թէ ամառը մօտ է: Նոյնպէս ալ երբ բոլոր ըսածներս կատարուին, գիտցէք թէ Մարդու Որդին գալուստը մօտ է եւ արդէն հասնելու վրայ:

Վստահ եղէք, որ այս սերունդը չանցած՝ ասոնք բոլորը պիտի պատահին: Նոյնիսկ եթէ երկինքն ու երկիրը անհետանան, խօսքերս պիտի չանհետանան:

Սակայն ո՛չ ոք գիտէ թէ ե՛րբ պիտի գայ այդ օրը կամ ժամը. ո՛չ երկինքի հրեշտակները, ո՛չ ալ Որդին, բայց միայն՝ Հայրը: ...

 **SCRIPTURE READINGS** 
I CORINTHIANS 1:18-24

For the message of the cross is foolishness to those who are perishing, but to us who are being saved it is the power of God. For it is written:

"I will destroy the wisdom of the wise; the intelligence of the intelligent I will frustrate."

Where is the wise man? Where is the scholar? Where is the philosopher of this age? Has not God made foolish the wisdom of the world? For since in the wisdom of God the world through its wisdom did not know him, God was pleased through the foolishness of what was preached to save those who believe. Jews demand miraculous signs and Greeks look for wisdom, but we preach Christ crucified: a stumbling block to Jews and foolishness to Gentiles, but to those whom God has called, both Jews and Greeks, Christ the power of God and the wisdom of God.

MATTHEW 24:27-36

Our Lord Jesus Christ said:

For as lightning that comes from the east is visible even in the west, so will be the coming of the Son of Man. Wherever there is a carcass, there the vultures will gather.

"Immediately after the distress of those days "the sun will be darkened, and the moon will not give its light; the stars will fall from the sky, and the heavenly bodies will be shaken."

"At that time the sign of the Son of Man will appear in the sky, and all the nations of the earth will mourn. They will see the Son of Man coming on the clouds of the sky, with power and great glory. And he will send his angels with a loud trumpet call, and they will gather his elect from the four winds, from one end of the heavens to the other.

"Now learn this lesson from the fig tree: As soon as its twigs get tender and its leaves come out, you know that summer is near. Even so, when you see all these things, you know that it is near, right at the door. I tell you the truth, this generation will certainly not pass away until all these things have happened. Heaven and earth will pass away, but my words will never pass away.

Ք Ր Ի Ս Տ Ո Ս Ի Խ Ա Չ Ա Փ Ա Յ Տ Ի Ն Գ Ի Ի Տ Ը

327-ին, Բիւզանդիոնի Կոստանդիանոս կայսեր մայրը՝ Հեղինէ կայսրուհին, Քրիստոսի խաչը գտնելու նպատակով կ'այցելէ Երուսաղէմ: Յուդա անունով հրեայ մը կ'օգնէ կայսրուհին գտնելու Յիսուսի թաղուած վայրը: Բաւական փնտռտուքներէ ետք, կը գտնուին երեք խաչեր՝ Քրիստոսի եւ իրեն հետ խաչուող երկու աւագակներուն խաչերը:

Տիրոջ խաչը ճանչնալու համար, նոր մահացած պատանիի մը դիակը հերթաբար կը դնեն խաչերուն վրայ: Երրորդին վրայ պատանին Յարութիւն կ'առնէ եւ ոտքի կը կանգնի: Այսպիսով, կը գտնուի խաչը, որուն վրայ Քրիստոս հոգին աւանդած էր;

Խաչափայտի գիւտէն ետք, Հեղինէ կայսրուհին կը բարեկարգէ Երուսաղէմի սրբազան վայրերը եւ Գողգոթայի վրայ շինել կու տայ Ս. Յարութեան տաճարը, ուր եւ կը գետեղուի Տիրոջ խաչափայտը:

Այդ հրաշքէն ետք, հրեայ Յուդան քրիստոնէութիւնը կ'ընդունի եւ կը դառնայ Երուսաղէմի եպիսկոպոսը՝ Կիւրեղ անունով, որ հետագային մօր՝ Աննայի հետ կը նահատակուի:

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին Գիւտ Խաչի տօնը կը կատարէ Հոկտեմբեր 23-29 հանդիպող Կիրակին: Յոյները այս տօնը միացուցած են Խաչվերացին եւ կը տօնեն Սեպտեմբեր 14-ին: Իսկ Կաթողիկոսները՝ Մայիս 3-ին:

Խ Ա Չ Ը

Սուրբ Խաչը Քրիստոնէութեան խորհրդանշանն է եւ պաշտամունքի ու երկրպագութեան առարկան:


Հին աշխարհի մէջ, յատկապէս Հռոմէական Կայսրութեան ժամանակաշրջանին, խաչը անարգ մահուան, անէծքի, նախատինքի եւ չարչարանքի գործիք էր: Խաչելութիւնը ծայրագոյն պատիժ էր եւ անով մահուան կը դատապարտուէին ամենածանր յանցագործներն ու աւագակները: Բայց 313-ին, Կոստանդին Ա. Մեծի ժամանակ, երբ Միլանոյի հրովարտակով Հռոմի մէջ Քրիստոնէութիւնը հեթանոսութեան հաւասար կրօնք հռչակուեցաւ, Ի յարգանք Քրիստոսի, պատիժի այդ ձեւն ալ վերցուեցաւ:

Ո Ի Շ Ա Դ Ր Ո Ի Թ Ի Ի Ն

Շաբաթ 9 Նոյեմբեր, 2019-ին, երեկոյեան ժամը 7:30-ին տեղի պիտի ունենայ մեր Եկեղեցւոյ 55-րդ տարեդարձի տօնակատարութիւնը՝ բարձր հովանաւորութեամբ Թեմիս Բարեջան Առաջնորդ, Բարձրաշնորհ Տէր Անուշաւան Սրբազան Արքեպիսկոպոս Դանիէլեանի:

Իսկ յաջորդ օրը, Կիրակի, 10 Նոյեմբերին, Առաջնորդ Սրբազան Հայրը պիտի պատարագէ եւ յաւուր պատշաճի քարոզէ: Պատարագի աւարտին, պիտի կատարուի յատուկ հոգեհանգիստ՝ ի յիշատակ եկեղեցւոյ ծառայող հոգելոյս հոգեւոր հովիւներուն, սարկաւազներուն, դպիրներուն, երգչախումբի անդամներուն, երեսփոխաններուն, հոգաբարձուներուն եւ Տիկնանց Միութեան անդամներուն:

Կը խնդրենք նաեւ մեր սիրեցեալ ժողովուրդի զաւակներէն, որ կանուխէն ապահովեն իրենց տեղերը հանդիսութեան մասնակցելու համար, եւ պատարագին ԱՆՊԱՅՄԱՆ ներկայ ըլլան՝ ներշնչուելու համար օրուան խորհուրդով եւ լսելու Սրբազան Հօր հայրական պատգամը:



2020 Membership Dues – Parishioners who have not paid their 2020 Annual Membership dues are encouraged to remit payment. The membership fees are \$150.00 for adults and \$50.00 for each full time student, ages 18-26. These dues are 100 percent tax deductible.



2020 FEASTS

October 25	Discovery of the Cross
October 31	Feast of All Saints
November 7	Holy Archangels Gabriel and Michael
November 28	Saint Thaddeus and Saint Bartholomew
December 12	Saint Hagop (James) of Nisibis
December 26	Saint Stephen the Protomartyr
December 28	Saints Peter and Saint Paul

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

Ի՞նչ է ԵԿԵՂԵՑԻՆ

Իւրաքանչիւր կրօն՝ իր արարողութիւններուն, ծէսերուն եւ աղօթքներուն համար ունեցած է իր յատուկ կեղրոնը, հաւաքատեղին, որ կոչուած է տարբեր անուանումներով:

Հեթանոսութեան ժամանակաշրջանին աղօթատեղին կոչուած է ՄԵՀԵԱՆ, երբեմն ալ՝ ՏԱՃԱՐ: Մովսիսական կրօնինը՝ ՏԱՃԱՐ, այժմ նաեւ՝ ՍԻՆԱԿՈՎ: Քրիստոնեաներունը՝ ԵԿԵՂԵՑԻ, իսկ Աւետարան-չականները կը գործածեն նաեւ ԺՈՂՈՎԱՐԱՆ տարազը:

Եկեղեցի բառը յունարէն էԿԼԻՋԻԱ բառին տառադարձումն է եւ կը նշանակէ հասարակութիւն, ժողովուրդ կամ հաւատացեալներու խումբ:

Եկեղեցոյ հիմնադիրն ու գլուխը Յիսուս Քրիստոս է, որուն համաձայն, Եկեղեցի կը համարուին Աստուծոյ անունով հաւաքուած հաւատացեալները:

Եկեղեցին եւ մասնաւորապէս Հայաստանեայց Եկեղեցին կը կոչուի Առաքելական, որովհետեւ հիմնուած ու տարածուած է առաքեալներու աշխատանքով ու քարոզչութեամբ:

Նիկիական Հաւատամքին մէջ կը կարդանք «Հաւատամք եւ ի մի միայն ընդհանրական եւ առաքելական սուրբ եկեղեցի»: Հետեւաբար, Եկեղեցին ՄԷԿ է, ՍՈՒՐԲ է, ԸՆԴ-ՀԱՆՐԱԿԱՆ է եւ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ է:

1. Մէկ կամ Միութիւն ըսելով կը հասկնանք Եկեղեցոյ զաւանական կամ վարդապետական միութիւնը: զաւանական նոյնու-թիւն՝ Յիսուսի անձնաւորութեան, Սուրբ Երրորդութեան եւ Աստուածա-չունչի ուսուցումներուն:

Միութեան համար արգելք չեն կրնար ըլլալ ազգերու տարբերու-թիւնները, անոնց խօսած տարբեր լեզուները կամ աշխարհագրական հեռաւորութիւնները ինչպէս նաեւ ծէսերու տարբերութիւնները:

Համաձայն որուն, եկեղեցին պէտք է ըլլայ մէկ, բայց դարերու ընթացքին ծագած վարդապետական հարցեր պատճառ դարձած են, որ քրիստոնէութեան մէջ բաժանումներ յառաջանան եւ տարբեր անուններով եկեղեցիներ գոյանան:

2. Եկեղեցին սուրբ է, որովհետեւ իր հիմնադիրը՝ Յիսուս Քրիստոս սուրբ է, ինչպէս նաեւ՝ առաքեալներն ու ընդհանրապէս քրիստոնէական հաւատքին համար նահատակողները:

Եկեղեցին սուրբ է նաեւ իր ճշմարիտ զաւանակութեամբ ու քարոզչութեամբ, իր պատգամած առաքինի վարք ու բարքով, կրօնական առողջ դաստիարակութեամբ եւ բարոյագիտական ուսուցումներով:

Եկեղեցին որպէս աղօթավայր եւ սուրբ է, որովհետեւ օծուած է եւ Աստուծոյ իմանալի ներկայութիւնը կը վայելէ:

3. Ընդհանրական ըսելով կը հասկնանք եկեղեցոյ տիեզերական ըլլալը: ԿԱԹՈՂԻԿԷ կը նշանակէ ԸՆԴ-ՀԱՆՐԱԿԱՆ: Եկեղեցին համամարդկային է եւ բոլոր ազգերու սեփականութիւնն է: Անոր տեւողութիւնը եւս յաւիտենական է:

4. Եւ վերջապէս, Եկեղեցին Առաքելական է, որովհետեւ առաքեալներուն կողմէ հիմնուած է:

Առաքեալները անսալով Յիսուսի պատգամին՝ «...Ինչպէս որ Հայրը զիս զրկեց, այնպէս ալ ես ձեզ կը զրկեմ: Հետեւաբար, գացէք եւ բոլոր ժողովուրդները ինձի աշակերտ դարձուցէք: Զանոնք մկրտեցէք՝ Հօր, Որդիին եւ Սուրբ Հոգիին անունով:» (Մատ. 28:18-19) ուղեւորուեցան աշխարհի չորս ծագերը, մկրտեցին հեթանոսները, Աւետարանի պատգամը փոխանցեցին, Քրիստոսի Յարութեան աւետիսը հաղորդեցին եւ եկեղեցի հիմնեցին:

Իսկ եկեղեցին որպէս ժողովուրդ եւ հասարակութիւն, կը բաղկանայ երկու մասերէ.

Ա. Անդրանկաց կամ Յաղթական եկեղեցի

եւ Բ. Զինուորեալ Եկեղեցի

Անդրանկաց կամ Յաղթական եկեղեցի ըսելով կը հասկնանք Երկնային Եկեղեցին, հրեշտակներու եւ սուրբերու ժողովը կամ ամբողջութիւնը, որոնք երկինքի մէջ կ'ապրին եւ արդէն պայքարած են չարին դէմ ու յաղթական դուրս եկած. մինչ Զինուորեալ Եկեղեցին այս աշխարհին մէջ կ'ապրի եւ պայքարի մէջ է չարին դէմ:

Զինուորեալ Եկեղեցին ալ կը բաժնուի երկու մասի.

1. Ուսուցանող Եկեղեցի, որ եկեղեցոյ պաշտօնէութիւնն է, հոգեւորականութիւնը:

2. Ուսանող Եկեղեցի, որ հաւատացեալ ժողովուրդն է, որոնց կը քարոզուի Աւետարանը:

Եկեղեցին որպէս քրիստոսահիմն հաստատութիւն, պարտականութիւն ունի ո՛չ միայն ծէս ու պաշտամունք կատարելու, այլ նաեւ հետեւելու մարդոց կրօնաբարոյական դաստիարակութեան, հոգիի փրկութեան, փոխադարձ սիրոյ եւ յարգանքի հաստատման, արդարու-թեան իրագործման եւ Աւետարանի գործնականացման:

Իսկ Սփիւռքահայ մեր կեանքին մէջ, եկեղեցին մեզի համար ունի նաեւ տարբեր իմաստ ու բովանդակութիւն: Հարիւրաւոր տարիներ ապրելով առանց պետականութեան՝ համայնքային դրութեամբ, շատ մը պետութիւններու մէջ մեր եկեղեցին պաշտօնապէս ճանչցուած է որպէս հայութեան ներկայացուցիչ եւ իրաւատէր:

Համայնքներու մէջ գործող Առաջնորդարանները՝ իրենց եկեղեցիներով, դպրոցներով եւ այլ մշակութային հաստատութիւններով, միաժամանակ կը հանդիսանան մեր ժողովուրդի ինքնութեան եւ ազգային ինքնուրոյն դիմագիծի փարոսները:

RELIGIOUS KNOWLEDGE

WHAT IS A CHURCH?

Each religion has its own special center for its ceremonies, rituals, prayers, and gathering place, which are called by different names.

During the pagan period, the place of worship was called MEHIAN, sometimes TEMPLE. The Movsian religion is the TEMPLE, now also known as SINAKAK. To the Christians, the CHURCH, and the Evangelicals also use the term ASSEMBLY.

The word "church" is a transliteration of the Greek word "EGLIZIA" and means society, people or group of believers.

The founder and head of the Church is Jesus Christ, according to whom believers gathered in the name of God.

The church, and in particular the Armenian Church, is called apostolic because it was founded and spread by the works and preachings of the apostles.

In the Nicene Creed we read "faith and only one universal and apostolic holy church". Therefore, the church is one, holy, universal, and apostolic.

1 . By "one" or "union" we mean the doctrinal or doctrinal union of the Church, the doctrinal identity of the person of Jesus, the Holy Trinity, and the teachings of the Bible.

The differences of nations, the different languages or geographical distances spoken by them, as well as the differences of rituals cannot be an obstacle for the union.

According to which, the church should be one, but the doctrinal issues that have arisen over the centuries have caused divisions in Christianity and the formation of churches with different names.

2 . The church is holy because its founder, Jesus Christ, is a saint, as are the apostles and those who are martyred for the Christian faith in general.

The church is also holy with its true creed and preaching, its virtuous conduct and morals, its sound religious upbringing, and its moral teachings.

The church is also sacred as a place of worship because it is anointed and rejoices in the presence of God.

3 . In general, we understand the cosmic nature of the church. KATOGHIKE means GENERAL. The church is universal and is the property of all nations. Its duration is also eternal.

4 . Finally, the Church is Apostolic because it was founded by the apostles.

The apostles heeded Jesus' message, "As the Father has sent me, even so I send you." Therefore go and make disciples of all nations. Baptize them in the name of the Father, and of the Son, and of the Holy Ghost. Mat . 28-18-19 They traveled four corners of the earth, baptized the Gentiles, preached the gospel, preached the gospel of the Resurrection of Christ, and founded a church.

The church, as a people and a society, is divided into two parts.

a. Andrankats or Victory Church

And

b . Military Church

By Andrankats or Victorious Church we mean the Heavenly Church, the assembly of angels and saints, or the whole, who live in heaven and have already fought against evil and triumphed. While the Military Church lives in this world and is in the fight against evil.

The Military Church is also divided into two parts.

1 . The Teaching Church, which is the ministry of the church, the clergy.

2 . The Student Church, which is the believing people to whom the Gospel is preached.

The Church, as a Christian institution, has a duty not only to perform rituals and worship, but also to follow the religious upbringing of people, the salvation of souls, the establishment of mutual love and respect, the realization of justice and the practice of the Gospel.

And in our Diaspora Armenian life, the church also has a different meaning and content for us. Living for hundreds of years without statehood in a communal state, in many countries our church is officially recognized as a representative and rightful owner of the Armenians.

The Prelacies operating in the communities, with their churches, schools and other cultural institutions, are at the same time the beacons of the people's identity and national identity.

Առակներու Գիրքէն

∞ 26.21∞

Ինչպէս կայծ չ'ըլլար առանց ածուխի, ոչ ալ կրակ՝ առանց փայտի, այնպէս ալ վէճ չի բռնկիր առանց կռուազան մարդու:

∞ 27.1-3∞

Վաղուան հաշուոյն պոռոտախօսութիւն մի՛ ըներ, որովհետեւ չես գիտեր՝ օրը ի՛նչ կը բերէ:

Ուրի՛շը թող քեզ գովէ, ո՛չ թէ դուն, օտարի՛ն բերնէն թող լսուի գովքդ, ո՛չ թէ քու շրթներէդ:

Ծանր է քարը, դժուարակիր՝ աւազը, քայց յիմարին պատճառած սրտնեղութիւնը երկուքէն ալ ծանր է:

From the Book of Proverbs

∞ 26.21∞

As charcoal to embers and as wood to fire, so is a quarrelsome person for kindling strife.

∞ 27.1-3∞

Do not boast about tomorrow, for you do not know what a day may bring.

Let someone else praise you, and not your own mouth; an outsider, and not your own lips.

Stone is heavy and sand a burden, but a fool's provocation is heavier than both.

ԱՂՈԹՔ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ

Փարատէ՛ ցաւերն ու բժշկէ՛ ժողովուրդիդ հիւանդութիւնները Տէր Աստուած մեր, եւ քու ամենայաղթ Սաչիդ նշանով կատարեալ առողջութիւն շնորհէ՛ բոլորին. որով, քու խաչովդ մարդոց տկարութիւնը վերցուցիր, եւ մեր կեանքի ու փրկութեան թշնամին դատապարտեցիր:

Դուն՛ես մեր կեանքն ու փրկութիւնը բարերար եւ բազումողորմ Աստուած. միայն դուն՛ կրնաս մեր մեղքերուն թողութիւն շնորհել, եւ ախտերն ու հիւանդութիւնները հեռացնել, որովհետեւ միայն Քեզի յայտնի են մեր կարիքները:

Ո՛վ բարիքներ պարգեւող, քու առատ ողորմութիւնդ պարգեւէ՛ արարածներուդ, իւրաքանչիւրին իր կարիքին համեմատ. որպէսզի միշտ փառաւորուելով գովարանուի ամենասուրբ Երրորդութիւնդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:



A Prayer for the Healing of the Sick

Lord our God, take away the pain and heal the sickness of your people. Grant them all complete health by the sign of your all-triumphant cross, by which you took away the frailty of the human race and condemned the adversary for our life and salvation. You are our life and salvation, O good and merciful God. You alone are able to forgive sins and to drive pain and sickness out of us, and you know how to cure our afflictions. O Giver of good gifts, give your creatures the gift of your abundant mercy, each according to their needs. Let us always glorify and praise the all-holy Trinity, now and always and unto the ages of ages. Amen.